*Պարոնայք էսէրներ, ի վերջոյ հասկացէք, որ դուք չէք, որ պիտի մեզ կապէք Ռուսաստանի հետ. մենք ողջունում ենք Խորհրդային Ռուսաստանը, եթէ նա ճանաչում է մեր անկախութիւնն ու ազատութիւնը* (ծափեր):

*Կառավարութեան համար թող պարզ լինի, որ ոչ մի գնով, ոչ մի պարագայում իշխանութեան թուլացում տեղի չպիտի ունենայ: Դուք, պարոնայք նախարարներ, ձեր խելքով, ձեր ամբողջ ուժով, հայ աշխատաւորութեան ու խորհրդարանի հետ միասին պիտի ծեծէք բոլոր դռները, պիտի սպառէք բոլոր միջոցները՝ փրկելու հայ ժողովրդի գոյութիւնն ու նրա հայրենիքի անկախութիւնը: Հայ աշխատաւորութեան վճռական և միահամուռ կամքն է լինել ազատ ու ապրել Միացեալ և Անկախ Հայաստանում:* (Երկարատև, որոտընդոստ ծափահարութիւն, որ կրկնւում է մի քանի անգամ):

Ա. Խոնդկարեան (*սոց.-յեղ.*). — *Հին Ռուսաստանում մի թերթ կար՝* «Новое Время», *որ ողջունում էր ամէն մի իշխանութիւն. այժմ «Դաշնակցութիւն»-ն է դարձել Ռուսաստանի նկատմամբ: Մենք էլ ենք քննադատում Ազրբէջանի կառավարութիւնը, բայց քննադատելով հանդերձ այդ կառավարութիւնը՝ պիտի խոստովանենք, որ ներկան աւելի լաւ է, քան հինը:*

Վ. Նաւասարդեան (*դաշ.*). — *Ինչո՞վ է լաւ:*

Ա. Խոնդկարեան (*սոց.-յեղ.*). — *Լաւ է հէնց նրանով, որ հինը ունէր ցցուած ժանիքներ...*

Վ. Նաւասարդեան (*դաշնակ.*). — *Իսկ նորը թաղնուած ժանիքներ:*

Ա. Խոնդկարեան (*սոց.-յեղ.*). — *Իսկ թէ նորը ի՞նչ ունի, դեռ չգիտենք: Այնուամենայնիւ լաւ է ունենալ թաղնուած ժանիքներ, քան ցցուած* (ծիծաղ դաշնակցականների կողմից): *Պարզ է, որ Խորհրդային Ռուսաստանը ազդել է և պէտք է ազդի այդ կառավարութեան վրա: Ի՞նչ պիտի լինի մեր դիրքը: Լաւ բան է, որ մարդ իր գլխի տէրն է և ունի ոյժ իր գլխի տէրը լինելու, բայց մենք ունե՞նք այդ հնարաւորութիւնը: Զպէտք է ընկնել ֆետիշների յետևից, չպէտք է մի իդէալ դնել և նրա համար կռիւ յայտարարել ամբողջ աշխարհին: Ի՞նչ անել ապա — համակերպւել, ահա իմ պատասխանը, համակերպւել, եթէ, իրօք, գալիս է խորհրդային իշխանութիւնը:*

Վ. Խորէնի (*դաշ.*). — *Գալիս է Թիւրքիան և ոչ Ռուսաստանը, մի խեղաթիւրէք փաստերը:*

Ա. Խոնդկարեան. — *Բայց համակերպւել չի նշանակում, ի հարկէ, տալ ամէն ինչ: Մենք պէտք է աշխատենք ձեռք բերել մաքսիմումը, իսկ եթէ չյաջողւեց, պատրաստ պիտի լինենք զիջումների, մինչև մեր անկախութիւնից հրաժարումը: Հայ ժողովրդի ֆիզիքական գոյութիւնը ելակէտ ունենալով՝ մեզ մնում է մի բան — Հայաստանում ևս յայտարարել խորհրդային իշխանութիւն* (բուռն ծիծաղ դաշնակցականների կողմից):

*Հաղորդակցութեան նախարար* Ա. Ջամալեան (*դաշ.*). — *Պատգամ. Խոնդկարեանն ասաց, թէ Ռուսաստանում մի թերթ կար, որի դերն էր գովել ամէն իշխանութիւն. ես էլ ասում եմ, Հայաստանում կայ մի կուսակցութիւն, որի դերն է գովել ամէն տեսակ իշխանութիւն, որ գալիս է հիւսիսից:*

*Ցաւոտի է արդէն, թէ էսէրները ի՞նչ յոյսեր էին կապում Բիչերախովի և Դենիկինի հետ. այսօր յայտնի դարձաւ մի ուրիշ բան ևս, այն, որ սոցիալիստ յեղափոխականների կուսակցութիւնը խորհրդային իշխանութեան գլխին հազար տեսակ լուտանքներ թափելուց յետոյ սկսել է նոյն այդ*